Նորանից պատանդ։ Ցումանի[1] բնակչաց հետ եւս խաղաղութիւն հաստատեց այն պայմանով, որ նոքա տարեկան 100 գլուխ ստրուկ՝ 50 պատանի եւ 50 աղախին սեւ մազերով եւ յոնքերով՝ (նա կտրեց մազերի ծայրերը) եւ 20.000 ֆ-դ- (ցորեն) պետական շտեմարանների համար մատակարարեն։ Մանեյով Զիրիկիրան երկիրը, Մրբվան հաշտութիւն կապեց երկրի իշխանի հետ այն հիման վերայ, որ նա իւրաքանչիւր տարի 50 գլուխ ստրուկ եւ 10.000 ֆ-դ- (ցորեն) մատակարարէ։ Բայց Համազենի բնակիչք չկամեցան խաղաղութիւն հաստատել նորա հետ. Մրբվան գրաւեց նոցա ամրոցը մի ամիս պաշարելուց յետոյ, այրեց, աւերեց, իսկ իշխանին պայման դրեց, որ նա 500 գլուխ ստրուկ մի անգամ տայ. նորան այլ հնար չկար, եւ (նա համաձայնեցաւ) բացի դորանից տարեկան 3000 ֆ-դ- (ցորեն) պետական շտեմարանների համար մատակարարել։ Ադյտեղից Մրբվան եկաւ Սինդան (?) եւ նուաճեց երկիրը խաղաղութեամբ, պայման դնելով, որ նորա իշխանը մի անգամ 100 գլուխ ստրուկ նորան մատակարարէ. ուրիշ հնար չունենալով, նա համաձայնեցաւ բացի այդ տարեկան 5000 ֆ-դ- (ցորեն) ուղարկել պետական շտեմարանը։ Տաբարիստանի բնակչաց Մրբվան պարտաւորցրեց տարեկան 10.000 ֆ-դ- մատակարարել, իսկ Ֆիլանշահի վերայ տուրք չդրեց նորա գեղեցիկ երգեցողութեան, գովելի գործի եւ մեծ քաջութեան համար։

Դորանից յետոյ Մրբվան մնաց Լակզիների ամրոցում, որոնք հրաժարեցան նորան որ եւ է տուրք վճարել. ուստի նա այնտեղից մեկնեցաւ խազարաց իշխանի մօտ, որին սպանեց նետով մի հովիւ, առանց նորան ճանաչելու։ Մրբվան Լակզիների հետ խաղաղութիւն կապեց այն պայմանով, որ նոքա 20.000 ֆ-դ- (ցորեն) մատակարարեն.

---

[1] Ըստ Istaxri Փայտակարանից 7 փարսախ հեռի է։